

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2013 թվականի հունվարի 21-ին կայացավ Արմավիրի մարզի Նոր Արտագերս համայնքի ընդհանուր ժողով:

Ժողովին մասնակցում էր ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության վարչության պետ պարոն Վ. Աբրահամյանը: Ներկա էին նաև համայնքի 45 անդամներ, մանկավարժներ և գյուղապետարանի աշխատակիցներ:

Ժողովը նախագահում էր համայնքի ղեկավար Ս. Հակոբյանը, քարտուղարում էր՝ աշխատակազմի քարտուղար Լ. Վասիլյանը:

Օրակարգ - 1. Համայնքի ղեկավարի 2012 թվականի երկրորդ կիսամյակի և տարեկան գյուղապետարանի գործունեության վերաբերյալ հաշվետվություն:

Ջեկ.՝ Համայնքի ղեկավար Սամվել Հակոբյան

Ջեկուցողը նշեց, որ 2012 թվականի 2-րդ կիսամյակում կատարվել է գգալի աշխատանք՝ ուղղված հարկերի հավաքագրմանը:

	1-ին կիսամյակ	2-րդ կիսամյակ
1. Հողի հարկ	217,4	8131,7
2. Գույքահարկ	920,1	911,5
3. Վարձակալական հողերի հարկ	26,2	857,7
4. Տեղական տուրքեր	0	67,6

Իրականացվել է հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և այլ վճարների հավաքագրման և հաշվառման վերահսկողություն:

Բյուջեի եկամուտները կատարվել են 99,7 % -ով:

	տարեկան պլան	փաստացի	կատարման տոկոսը
1. Հողի հարկ	8200.0	8349.1	101.8
2. Գույքահարկ	1750.0	1831.6	110.2
3. Տեղական տուրքեր	80.0	67.6	84.5
4. Վարձ. հողերի հարկ	1000.0	883.9	88.4
5. Տեղական վճարներ	1200.0	900.7	75.1
6. Պաշտոնական տրանսֆ. 17602.5		17602.5	100.0

Կատարվել են նաև բազմաթիվ աշխատանքներ.

Սիստեմատիկաբար կատարվում են փողոցների աղբահանման աշխատանքները, ախտահանվում է խմելաջրի համակարգը:

Համայնքում հիմնվել է 1.96 հա պտղատու այգի, ցանվել է 53 հա ցորեն և 3 հա առվույտ: Բարեկարգվել է գյուղամիջյան կանաչապատ հատվածը:

Զեկույցում նշվեց նաև համայնքի արդի վիճակը.

Համայնքում հաշվառված է 1778 մարդ, որից 284 եզդի, 216 ասորի, 1 հույն և 1277 հայ: փարոս համակարգում հաշվառված են 26 նպաստառու ընտանիքներ:

Համայնքում 2012 թվականին ծնվել է 20 երեխա: Մահացության թիվը համայնքում 4 մարդ:

Համայնքում առկա է 310 քարաշեն բնակելի տուն:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 674.5 հա, որից՝

Տնամերձ - 135.5 հա

Պտղատու այգի – 94.5 հա

խաղողի այգի – 39.5 հա

Վարելահող – 245.5 հա

Վարձ. գ/ն հողեր – 38.0 հա

Համայնքը լիարժեք ապահովված չէ ոռոգման ջրով, սակայն 2013 թվականին այն կբարեկարգվի:

Ջեկուցողը նշեց, որ համայնքում ամանորի կապակցությամբ կազմակերպվել է տոնածառի հանդես, որտեղ 0-14 տարեկան երեխաներին բաժանվել են ամանորյա նվերներ շուրջ 180 երեխաների, որի ընդհանուր արժեքը կազմել է 300000 (երեք հարյուր հազար) դրամ:  
Եթե լուծվեն համայնքին վերաբերող հիմնախնդիրները, ապա մեր գյուղն ավելի ու ավելի կբարեկարգվի:

Համայնքի հիմնախնդիրները

1. Կուլտուրայի տուն / հիմնանորոգում/
2. Մանկապարտեզի շենք / հիմնանորոգում/
3. Դպրոցի շենք / հիմնանորոգում/
4. խմելաջրի ցանց / հիմնանորոգում/
5. Համայնքի 500 մ տարածքի ասֆալտապատում

Ժողովը որոշեց.

Հանձնարարել համայնքի ղեկավար Ս. Հակոբյանին հետևողականություն ցուցաբերելու համայնքի հիմնախնդիրների աշխատանքների բարեկարգման և բարելավվման ուղղությամբ:

Նոր Արտագերս համայնքի  
Ղեկավար՝



Ս. Հակոբյան